ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 1-5-ը Կազան (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կազան (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի հուլիսի 1-5-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Աշխատանքի միջազգային կազմակերպություն (այսուհետ՝ ԱՄԿ)

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Մասնակցություն «Աշխատանքի թվայնացված աշխարհին ընդառաջ. Աշխատանքի ոլորտի ապագան բոլորիս համար» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Հուլիսի 2-ին ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները.

   - ԱՄԿ Աշխատանքի ապագայի հարցերով գլոբալ հանձնաժողովի զեկույցը.
   - Աշխատանքի ապագան և Թաթարստանի երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները.
   - ԱՊՀ մի շարք երկրների օրինակով երիտասարդների զբաղվածության մարտահրավերները և միտումները համեմատական զեկույցը.
   - Հայաստանի կողմից պատրաստված՝ գենդերային և երիտասարդների զբաղվածության հարցերով տարածաշրջանային վերլուծական զեկույցը, որի

ընթացքում իմ կողմից ներկայացվեց համապատասխան իրավիճակը Հայաստանում, վարվող քաղաքականությունը և մի շարք նպատակային ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդների և հատկապես կանանց զբաղվածության ապահովմանը:

Ներկայացումների արդյունքում կազմակերպվեց խմբային աշխատանք, որի ընթացքում քննարկվեցին մասնակից երկրների փորձը երիտասարդների զբաղվածության և գենդերային հավասարության հարցերով:

Հուլիսի 3-ին ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները.

- «Երիտասարդների զբաղվածության Գենդերային հավասարության որակական բեկումը» ԱՄԿ զեկույցը, որի ընթացքում ներկայացվեց գենդերային հավասարության խզումը եկամուտների, զբաղվածության, աշխատաշուկայում մասնակցության, գործազրկության և զբաղվածության պաշտպանվածության հարցերում: Ներկայացվեցին նաև այն բոլոր ԱՄԿ կոնվենցիաները, որոնք ընդունվել են նշված խնդիրները կարգավորելու համար:
- Երիտասարդների զբաղվածության փորձը Ադրբեջանի և Ուզբեկստանի Հանրապետություններում:
- Երիասարդների զբաղվածության աջակցությունը, մարտահրավերները և պատասխան քայլերը, Ռուսաստանի Դաշնության փորձը, որի ընթացքում ներկայացվեցին ՌԴ տարբեր երկրամասերի և հանրապետությունների փորձը, համապատասխան վիճակագրությունը և իրականացվող միջոցառումները:
- Երիտասարդների զբաղվածության ոլորտում Չինաստանի ինովացիոն փորձը:

Հուլիսի 4-ին ներկայացվել և քննարկվել են հետևյալ թեմաները.

- ԱՄԿ միջազգային փորձագետի կողմից ներկայացվեց Զբաղվածության պետական ծառայությունների համար նախատեսված ուսումնական ձեռնարկի նախագիծը:
- Կազմակերպվեց խմբային աշխատանք «Զբաղվածության պետական ծառայությունների համար աշխատաշուկայի հիմնական միտումները, մարտահրավերներն ու հնարավորությունները» թեմայով:
- Կազմակերպվեց «Աշխատանքի ապագան և երիտասարդների զբաղվածությունը» թեմայով պանելային քննարկում, որրի ընթացքում սոցիալական գործընկերության կողմերը ներկայացնող բանախոսները խոսեցին առկա խնդիրների, մարտահրավերների և անհրաժեշտ քայլերի մասին:

Այնուհետև կազմակերպվեց եռակողմ քննարկում, որի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- կողմերի դերը հետագայում երիտասարդների՝ դպրոցից աշխատանքի անցնելու, ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունների և որակյալ կրթության հարցում.
- երիտասարդ աշխատողների համար համապատասխան պաշտպանություն ապահովմանն ուղղված նորարարական նախաձեռնություններ, որոնք կարող են նպաստել տնտեսության ոչ ֆորմալից ֆորմալ անցում կատարելուն.
- ինչպես կարող են աշխատողները, ձեռնարկությունները և կառավարությունները միասին աշխատել դժվարությունների հաղթահարման ուղղությամբ՝ օգտագործելով թվային տնտեսության հնարավորությունները, այդ թվում նաև՝ թվային աշխատանքային պլատֆորմները:

Հուլիսի 5-ին համաժողովի մասնակիցների համար կազմակերպվեց ճանաչողական այց Կազան քաղաքի Մոսկվայի շրջանի զբաղվածության կենտրոն: Այցի ընթացքում ներկայացվեց կենտրոնի կողմից գործատուներին և աշխատանք փնտրողներին տրամադրվող ծառայությունները, "Работа в России" ինտերնետ պորտալի միջոցով թափուր աշխատատեղերի հավաքագրումը, իրականացվող ակտիվ ծրագրերը: Նշվեց, որ կենտրոնը ներառված է զբաղվածության կենտրոնների վերափոխման փորձնական ծրագրում, որի համաձայն պետք է փոխվեն շենքային, աշխատանքային պայմանները հատուկ մշակված ստանդարտներով, վերապատրաստվեն բոլոր աշխատակիցները, որոնք պետք է կրեն համազգեստ, բարելավեն ծառայությունների որակը:
Նշվեց, որ Թաթարստանում ևս հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման համար գործում է քվոտա, որի համաձայն 35-100 աշխատող ունենալու դեպքում քվոտան սահմանվում է 3%, իսկ 100 և ավելիի դեպքում՝ 2%:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի ընթացքում հանդիպել եմ ԱՄԿ ներկայացուցիչների հետ և քննարկել եմ զբաղվածության նոր ռազմավարության մշակման աշխատանքներին ԱՄԿ աջակցության հետ կապված հարցերը.

- ԱՄԿ միջազգային փորձագետների Հայաստան այցելությունների ժամանակացույցը՝ աջակցելու ռազմավարությունը մշակող ազգային փարձագետների թիմին.
- ազգային փորձագետների թիմը պետական ֆինանսների կառավարման փորձագետով համալրելու պայմանավորվածությունը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի շրջանակներում, ՀՀ աշխատանքային օրենսդրության փոփոխությունների նպատակով ստեղծվելիք աշխատանքային խմբին ԱՄԿ կաջակցի՝ տրամադրելով միջազգային փորձագետ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Շարունակել համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության և նրա առանձին երկրամասերի հետ՝ զբաղվածության հարցերի շուրջ փորձի փոխանակման նպատակով.
- քայլեր ձեռնարկել աշխատանքի բորսայի էլեկտրոնային առցանց հարթակի (ինչպես նաև այդ հարթակին կից մասնագիտական կողմնորոշման ենթահարթակի) նախագծման մշակման և ներդրման ուղղությամբ.
- միջազգային փորձի հիման վրա վերանայել ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման համար գործող աշխատատեղի քվոտայի սահմանաչափերը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

09.07.2019